# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Նոյեմբերի 5-ին, կիրակի.- Ը. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: Հընթացս Ս. Պատարագի, Տ. Փառեն եպս. Ավետիքյանի ձեռամբ, կատարվեց ճեմարանավարտ հինգ սարկավագների՝ Հրայր Խաչատրրյանի, Մկրտիչ Այվազյանի, Վիգեն Ղազարյանի, Մանվել Շաքարյանի և Արտակ Թումանյանի քահանայական ձեռնադրությունը: Ձեռնադրության ավարտին պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս.՛Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Նոյեմբերի 11-ին, շաբաթ.- Սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն:***

Այսօր, երեկոյան, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարները Մայր Աթոռ բերելու կապակցությամբ, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Այսօր զիմանալի լուսոյն ծագողն ի խաւարի նստելոցս, զԳրիգորիոս Սուրբ Հայրապետն եկայք վերապատուեսցուք» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Նոյեմբերի 12-ին, կիրակի.- Թ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Նոյեմբերի 19-ին, կիրակի.- Ժ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Նոյեմբերի 21-ին, երեքշաբթի.- Բ. օր Յիսնակաց պահոց: Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամաց ի Տաճարն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մարկոս աբեղա Մարկոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Նոյեմբերի 26-ին, կիրակի.- Ա. կիր. Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շնորհք ծ. վրդ. Գասպարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: